

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/7**

**14 օգոստոսի 2014 թ.**

Քննարկվեց «ԱԼՄԵՈ» ՍՊԸ 30.07.2014 թ-ի առարկությունները ՀՀ ՖՆ ՕՀՎ 29.07.2014 թ-ի թիվ 1004287 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.06.2013 թ-ի թիվ 1004287 հանձնարարագրի համաձայն «ԱԼՄԵՈ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 29.07.2014 թ-ի թիվ 1004287 ստուգման ակտը:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ռ.Պետրոսյանի 17.07.2013 թ-ի որոշման համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի հատկանիշներով «Տապինո» և «Մանաուս» ՍՊԸ-ների տնօրեն Ռուզաննա Աբրահամյանի նկատմամբ, որը հանդիսանում է նաև «ԱԼՄԵՈ» ՍՊԸ տնօրենը, հարուցվել է թիվ 83108013 քրեական գործը, որը ներկայումս գտնվում է մինչդատական վարույթի փուլում:

Միևնույն ժամանակ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությանում նյութեր են ստացվել «ԱԼՄԵՈ» ՍՊԸ նկատմամբ կազմված ՀՀ ՖՆ ՕՀՎ 29.07.2014 թ-ի թիվ 1004287 ստուգման ակտի վերաբերյալ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքները Հանձնաժողովը գտնում է, որ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԱԼՄԵՈ» ՍՊԸ 30.07.2014 թ-ի առարկությունների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«ԱԼՄԵՈ» ՍՊԸ 30.07.2014 թ-ի առարկությունների հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

**Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝**



**Ռ.ԱՄՏԱԴՅԱՆ**